

ընդամենը զրէ Ս. Պապին եղածին նկատմամբ, յիշելով անոր մէջ Պատրիարքին օգնութիւնները եւ խնդրելով Ս. Պապէն որ զթուրթեամբ նայի Հայոց եկեղեցոյն: Կը խնդրեն միանգամայն որ յարգանքի նամակ մը զրէ առ Ս. Պապը իբրեւ գլուխ քրիստոնէական հաւատքի կամ կրօնքի: Թէ այդ նամակը Հռոմ զրէ մէկու մը ձեռքով որ կ'ուզէ ուխտի երթալ Հռոմ, թէ թափօրով պիտի դիմաւորեն, եւ հատուցանեն անոր ուղեւորութեան ծախքերը, ինչպէս նաեւ պիտի հոգան վերադարձին համար հարկ եղածը: Այդտեղ է որ կը յայտնէ նաեւ իր փափաքը Սաղմոս եւ Աւետարան տպելու:

Հուսկ կ'ակնարկէ թէ Ս. Պապին (Գրիգոր ԺԳ.) կողմէ շատ մը քրիստոնէայ աղբերու հրաւերը դացած է որ նուիրակ զըրկեն Հռոմ նոր բանի մը համար զոր Ս. Պապը պիտի ուղէ:

Տէրգնցին չի հասկցներ թէ ինչ է այդ նոր բանը: Սակայն նկատելով որ ժամանակին բացառիկ դէպքը Գրիգոր ԺԳ. Ս. Պապին կողմէ հրատարակութիւնն է նոր Տոմարին 1582-ին, այդ բլլալու է հաւանորէն նաեւ Տէրգնցիի ակնարկած նոր բանը: Եւ անոր համեմատ կ'ուզէ որ Դաւիթ Պատրիարքն ալ փութայ եպիսկոպոսներով, քահանաներով եւ վերջապէս փառալուք հանդերձանքով դայ Հռոմ մտնէ, եւ

թէ իրենք չլսուած փառաւորութեամբ պիտի ընդունին զինքը, եւ անով թէ՛ Պատրիարքը պիտի փառաւորուի եւ թէ Հայոց աղբը բոլոր օտար աղբերուն առջեւ որ կը վիտան Հռոմի մէջ:

Նամակին վերջաւորութեան Հռոմի հայերու հրաւերը հետզհետէ կը դառնայ խանդավառ եւ տենդալին ծայրադոյն ուղեւորութեամբ՝ անոր պատկերացնելով Հռոմի արտաքին եւ սրբազան զմայլելի գեղեցկութիւններն ու սրբութիւնները, եւ վերջապէս Ս. Պապը՝ նոր Պետրոս, Վէմ հաւատոյ, փոխանորդ Քրիստոսի: Եւ հուսկ՝ թէ Պատրիարքը հետը բերելու է յարմար թանկագին ընծաներ Ս. Պապին նուիրելու:

Տէրգնցին 1583-ին կը զրէ այս բաները, Հռոմ հասած տարին: Նամակի խորքը խանդավառ սիրոյ եւ յարգանքի արտայայտութիւն մըն է թէ՛ հանդէպ Հայ բարձրաստիճան եկեղեցականին՝ այսինքն Դաւիթ Պատրիարքին, եւ թէ՛ մանաւանդ Հռոմի Ս. Քահանայապետին՝ որուն հանդէպ կը ցուցնէ բարեպաշտ քրիստոնէայի անվերապահ եւ խոր հաւատքը: Նամակը ուրեմն կրկնապէս հետաքրքրական կը մընայ մեղի՝ թէ՛ պատմական եւ թէ՛ կրօնական տեսակէտով:

Հ. ԵՂԻԱ ՓԵՋԻԿԵԱՆ

ՈՒՂՂԵԼԻ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Բագմալեպի նախորդ միացեալ թիւերով (թ. 7-9) հրատարակուած Պր. Պերճ Մ. Կարապետեանի զրամագիտական յօդուածին մէջ քանի մը տպագրական սխալներ սպրդած են, զոր կը յանձնենք ընթերցողներու ուշադրութեան.

հջ	սխալ	տող	սխալ	ռաւիղ
156	բ	38	270 տեսակ	350 տեսակ
158	ա	3	246-ը	46-ը
163	բ	22-23	արձանագործներուն	կաղապարագործներուն
168	ա	5	Սիսի մէջ իշխան	Սիսի մէջ իշխող
168	ա	38	ամենակարեւոր	ամենատկար

ՎԵՀ. ԳԱՐԵԳԻՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՅՈՎՍԷՓԵԱՆՑ

ԿԵԱՆՔԸ ԵՒ ԳՈՐԾԸ

(1867 - 1952)

Տարւոյս աղապարէն մեծագոյն սուգը Գարեգին Կաթողիկոսի մահն եղաւ: Հոգեւորականի մը՝ որ կըթական - հովուական ասպարէզներէն դուրս եւ վեր՝ որոնց մէջ երկար տարիներ ապրեցաւ ու գործեց մեծ եռանդով ու նուիրումով, մեծ անոն մը կը թողու իբրեւ բանասէր ու մանաւանդ իբրեւ Հայ հնագէտ եւ Հայ գեղեւան իբրեւ Հայ հնագէտ եւ Հայ գեղեւան արուեստի եւ վերջապէս ընդհանուր առումով Հայ քաղաքակրթութեան պատմութեան ուսումնասէր, թողլով մեղի գրական մեծաքանակ եւ թանկագին արդիւնաբերութիւն մը որ պատկառելի է եւ մեծապէս դնահատելի նոր ուղիներուն համար զոր պատմութեան վրայ:

* * *

Երկար եւ բազմաբեղուն կեանք մը եղաւ Վեհ. Հանդուցեալինը: Ծագումովը՝ հայ աշխարհի շատ խոնարհ դասակարգէն. ուսկից նա շնորհիւ իր բնատուր ուղիմուտեան եւ եռանդուն գործունէութեան՝ հետզհետէ վերացաւ մինչեւ եկեղեցական ու գրական ասպարէզներու գերագոյն բարձունքները:

Ծնած է 17 Դեկտեմբեր 1867-ին հին Արցախի Ղարաբաղի կամ Խամսայի մեկ լիբուրթեան Զրաբերդի գաւառի Մաղաւուզ գիւղը՝ ուր այդ ժամանակ կը գտնուէին իր ծնողքը. բայց իր հայրենի գիւղը Մարաղան է: Կը խոստովանի թէ իր ևրաժիշտ հայ-

րիկէն «եմ ժառանգել որոշ չափով գեղարուեստական զգացմունքս շատ կողմերով» (1):

Իր նախնական ուսումը շատ դժուար ու տաժանագին կ'ըլլայ ծնողաց աղքատութեան պատճառով, գիւղէ գիւղ, դպրոցէ դպրոց մինչեւ որ կը յաջողի Գէորգեան ձեմարան մտնել 1882-ին եւ ուր շնորհիւ իր ջանքերուն հետզհետէ կը յառաջագիմէ:

Աշակերտական շրջանին, 1887-ին, Մանուկ Աբեղեանի վիճակութեամբ եւ քանի մը ընթերցողներու հետ կ'ուղեւորի Գէպի Անի, որ իր վրայ «ոչ միայն գիտական, այլ եւ հայրենասիրական բուռն ազդեցութիւն կը գործէ»:

Իր աշակերտակիցներն էին ապագայ հայ գրական ու հանրային կեանքի կարեւոր դէմքեր, ինչպէս Մ. Աբեղեան, Ստ. Կանայեան, Ա. Ահարոնեան, Շանթ, Ա. Իսահակեան, Գէորգեան, Կ. Վրդ. Տէր Մկրտչեան, Տիրայր (Եսայ.), Գէորգ (Կաթողիկոս Էջմիածնի) եւն.:

1889-ին նա կ'ուխտէ «նուիրուիլ եկեղեցու ծառայութեան» եւ կը ձեռնադրուի սարկաւազ եւ Էջմիածնի միաբան. եւ 1890-ին, դեռ ուսանող, կը զրէ իր առա-

(1) Տե՛ս ինքնակենսագրութիւն Վեհ. Հանդուցեալին, գրի առնուած Դեկտեմբեր Սրբազան Բոլոսեանէ 1942-ին՝ Ամերիկայի մէջ. կը հասնի մինչեւ տեւ 1900: Շարունակութիւնը կատարած է Գնէլ Ծ. Վ. ձերեճեան (Հասկ, 1952, թ. 7-9, տպ. Անթիլիաս): Մենք կ'օգտուինք ատկից եւ ժամանակակից արժէքաւոր գրողներէ:

Չին յօդուածը «Ս. Լուսաւորիչ եւ Հայաստանեայց Ս. Եկեղեցի» (2) :

1890-ին կ'աւարտէ Ճեմարանը, եւ համեմատ իր ջերմ փափաքին 1892-ին կը յաջողի անցնիլ Գերմանիա, ուր Երկու տարի Լայպցիկ եւ Երկուքուկէս տարի ալ Հալէ ե Պերլին ուսանելով՝ փիլիսոփայութեան «տոքթորայի քննութիւն կու տայ Լայպցիկի համալսարանում» եւ 1897-ի Փետրուարին աւարտելով՝ էջմիածին կը վերադառնայ եւ Նոյեմբեր 30-ին կուսակրօն քահանայ կը ձեռնադրուի եւ իսկոյն կը սկսի դասախօսել Գէորգեան Ճեմարանին մէջ :

1898-ի ամբան կը կատարէ հնադիտական ուղեւորութիւն Տաթեւ, Շուշի, Գանձասար :

1901-2 թուականներուն Առաջնորդական փոխանորդ է Թիֆլիսի մէջ, երբ առիթ ունեցած է շփուելու մեր առաջնակարգ մըտաւորականներուն եւ գրողներուն հետ, որոնք պարբերաբար «փոխն ի փոխ մէկն ու մէկը մի դասախօսութիւն էր անում» դիտական, գրական, հասարակական, կամ կարդում էր իւր նոր գրած մի ստեղծագործութիւնը եւ մտքերի փոխանակութիւն էր լինում» : ու կը յիշէ Աղայեանը, Թումանեանը, Աղբալեանը եւն. որոնք կը նըպաստեն իրեն «Ժողովրդական լինելու» :

1902-1905 կը վարէ Երեւանի թեմական դպրոցը եւ 1905-ին Գէորգեան Ճեմարանինը, ուր կը դասախօսէ աստուածաբանական եւ հնադիտական ուսումներ : 1906-1907 խմբագրապետ է «Արարատ» թերթին, եւ վերջին տարին՝ վանահայր Ս. Հովհաննիսէի :


Այնուհետեւ կը մասնակցի Ուսուցչ. Մասի հնադիտական արշաւախումբին, եւ

այդ առիթով կը գտնէ Տրդատի յունարէն արձանագրութիւնը Արաղածի մօտ : Այդ եւ նման հնադիտական աշխատանքներու մէջ իր ցոյց տուած աջողակութեան համար Ուսուցչ. Մասի առաջարկով Գարեգին վրդ. կ'ընդունուի որպէս իսկական անդամ Ռուսիոյ Կայսերական Հնադիտական Ընկերութեան :

1911-ին կը ճամբորդէ Երուսաղէմ եւ Կ. Պոլիս՝ ընկերակցութեամբ լաւ նկարիչ Եղիշ Թադէոսեանի, որ կ'օրինակէ «սքանչելի հարազատութեամբ» Ս. Յակոբեանց վանքին եւ Կ. Պոլսի աղագային մատենադարանի կարեւոր ձեռագիրներուն մանրանրկարները, յատկապէս թագաւորական եւ իշխանական դիմանկարները, որոնք մաս պիտի կազմէին իր հոյակապ ու գրեթէ զուլս-զործոցը նկատուող Հայ մանրանրկարչութեան քարտէզին : Իսկ ինք կը գրադի ուսումնասիրելով եւ նկարագրելով հայ դեղարուեստի զոհար ձեռագիրները՝ զբնթումն եւ մանրանկարներու արժէքներուն համար, օրինակելով եւ հաւաքելով միանգամայն անոնց յիշատակաբանները, որոնցմով պիտի ձեւանար յետոյ «Յիշատակարանք ձեռագրաց»ը, որուն Ա. հատորն արդէն լոյս տեսաւ անցեալ տարի :

1914-ին նա Պերլին կ'երթայ ազգայրել տալու աշխտեղ իր վերոյիշեալ կարեւոր գործը՝ Հայ Մանրանկարչութեան քարտէզը. եւ ահա կը պայթի համաշխարհական պատերազմը. եւ ինք ամէն բան հոն թողած կը դառնայ էջմիածին՝ Պոլիս - Սամսոն - Ամասիա - Եւդոկիա - Սերաստիա գծով, այդպէս օգտագործելով առիթը՝ պրպտելով եւ ուսումնասիրելով հայ եկեղեցիներուն մէջ եղած ձեռագիրներն ու հնութիւնները :

1914-ին դարձեալ վերադառնալով կարգուի Գէորգեան Ճեմարանի. պաշտօն՝ զոր կը վարէ մինչեւ անոր փակումը՝ 1917-ին : Մեր հայրենիքի սեւ ու արիւնոտ օրերուն, երբ թրջական սահմաններէն զերծ-



ՎԵՇ. ԳԱՐԵԳԻՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՅՈՎՍԷՓԵՍՅԱՆ

(2) Արարատ, 1891, Գ. : Տե՛ս նաեւ «Գէպի լոյս եւ կեանք», Անթիլիս 1947, ուր ամփոփուած են Գարեգին Կաթողիկոսի կրօնական ու դիտական յօդուածները :

ՎԵՃ. ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՅՈՎՍԷՓԵԱՆՅԻ ԳՈՐԾԵՐԸ

ԳՐԲԵՐ (տպում) .

- Սամայ Ծոներ (գրի առաւ) . Թիֆլիս 1892:
 Փշրանքներ ժողովրդական բանահիւսութիւնից .
 Թիֆլիս, 1892:
 Խորովիկ Թարգմանիչ և Երկասիրութիւնը նո-
 բին . Վաղարշապատ, 1903:
 Համառոտ գիտելիք հնագրական արքայի դործա-
 ծութեան համար . Էջմիածին, 1902:
 Գրչութեան արուեստը հին Հայոց մէջ - Ման Գ.
 Քարտէջ հայ հնագրութեան (արտատպ. «Շո-
 դակթէն») Վաղարշապատ, 1913:
 Խաղրակեանք կամ Պոռնեանք Հայոց պատմ. մէջ .
 ՄԱՍՆ Ա. Վաղարշապատ, 1928:
 ՄԱՍՆ Բ. (Հոգեւոր կեդրոններ և Գլխավոր
 բարձր դպրոց) Երուսաղէմ, 1942-1944:
 Գ. ՀԱՏՈՐ (Արձանագրութիւններ . յիշատակա-
 րաններ ևն.) Նիւ Եօրք, 1942-1943:
 Նիւթեր և Ուսումնասիրութիւններ Հայ Արուեստի
 և Մշակոյթի պատմութեան .
 ՊՐԱԿ Ա. (Վախտանգ, Իզնատիոս մանրանկա-
 րիչ, Հաղարտի դպրոց) արտպ. «Սիոն»է, 1935:
 ՊՐԱԿ Բ. (Կոստանդին Ա. Կաթ., Մի ձեռագիր
 Աւետ., Իզնատիոս) . արտատպ. «Հայաստա-
 նեայց եկեղեցի»է. Նիւ Եօրք, 1943:
 ՊՐԱԿ Գ. (Պաղպաղեմ և զմբէթաւորումը նախ-
 նական հայ տաճարների - Գերեզմանական կո-
 թողներ ևն.) Նիւ Եօրք, 1944 (Անգլ-հայ):
 ՊՐԱԿ Դ. (Մանր արուեստի մնացորդներ) Ընդ
 մամլով. Անթիլիաս, 1952-3:
 ՊՐԱԿ Ե. (Էջմիածնի տաճարի նկարագրողումն
 ու ծաղկազարդումը ԺԷ-ԺԸ դարերում) . «Հասկ
 հայագիտ. Տարեգիրք» Բ. Անթիլիաս, 1951:
 Մի էջ Հայ արուեստի և Մշակոյթի պատմութիւ-
 նից . Հայէպ, 1930:
 Հաւուց Թառի Ամենափրկիչը . Երուսաղէմ, 1937:
 Արագածի զապաթին՝ Ի խնդիր Լուսաւորչի կան-
 թեղին . Նիւ Եօրք, 1941:
 Դէպի լոյս և կեանք (Քարոզներ, դր-գեղ. և
 իմաստ. յօդուածներ) . Անթիլիաս, 1947:
 Յիշատակարանը Զեռագրաց Ա. հատ. (Ե. զարեց
 մինչև 1250) . աշխատակցութեամբ Ս. Սիմո-
 նեանի, Անթիլիաս, 1951:
 Յիշատակարանը Զեռագր. Բ. հատ. Ընդ մամլով:
 Ստեփանոսի Սիւնեցոյ մեկնութիւն չորեք Աւետա-
 րանաց և մեկնութիւն Եզեկիէլի (քնադ. հրտ.)
 Անթիլիաս, 1952-3 (Ընդ մամլով):
 Երզնկայի Մանրանկարչական դպրոցը (արքայ-
 Ընդ մամլով:
 Mosaik mit armenischer Inschrift im Norden

Jerusalem, Zeitschrift des Deutschen Pa-
 lestina Vereins. Band XVII, 4.
 Die Entstehungsgeschichte des Monotheismus
 nach ihren Ovelen geprüft u. dargestellt,
 Leipzig, 1897.
 Потомство Тарсанча и Мина Хатуни от-
 тискъ изъ «Христ. востока». С. П. 1913.
 Оразчикки Армянских Церковных Вихивек
 (отделный оттиск изъ «Христ. востока»)
 С. П. 1916, էջ 21 և չորս տախտակ,
 Извлечение изъ истории Григорія Камаха-
 ского или Даранагского касмателно Гарни
 (отд. оттиск изъ Хр. вост.)

ՅՈՒՈՒԱԾՆԵՐ

«Արարատ»ի մէջ .

- Ս. Լուսաւորիչ և Հայաստանեայց Ս.
 Եկեղեցի Գ. 1890
 Կոմիտաս Կաթողիկոսի մի նոր արձա-
 նագրութիւն Ժ. 1898
 Ծրդութիւն հին Աւետարանը . . . ԺԱ-ԺԲ 1898
 Ժողովրդ. բանահիւսութեան հետքեր
 միջնադարեան տաղարաններում . ԺԱ-ԺԲ. 1899
 Հայագիտական տեղեկութիւններ . Բ-Զ. 1899
 Մի ձեռագիր Սամեցի (Կերմանցի) . . . 1899
 Մայր Աթոռի մատենադարանը . . Ա. 1901
 Դաւթի փիլիս. «Բան հաւատոյ Ընդ-
 դէմ հերձուածողաց» ևն. Գ. 1906
 Մի կարեւոր գիւտ. Իրենիոսի Յոյցք
 ստաք. քարոզութեան Ա. 1907
 Նահապետ Եպս. Նահապետեան . . Ա. 1907
 Դաւթի փիլիսոփայ (Հարբացի) . Ա, Գ, 1907
 ԺԱ-ԺԲ. 1916
 Դաւթի Հարբացին և Պիտոյից գիրքը . Ա. 1908
 Հայոց Հայրապետական Աթոռը . . Ա. 1908
 Նախնեայ յիշատակարաններ . . Ա, Գ. 1910
 Ազապի հաստատութիւնը Հայոց Եկե-
 ղեցոյ մէջ Ժ. 1912
 Նոր Նիւթեր Թովմա Մեծփեցու կեն-
 սագրութեան 1913, 1914
 Հայագիտական աշխատք 1914, 1915
 Մի կարեւոր Նաղաշի թուղթը Ֆրեդերիկոյ
 ժողովի առթիւ Ե, Զ. 1916
 Զեռագրական նորութիւններ . . . Բ-Գ. 1917
 Պատմութիւն Յովհ. Մարգարոմեցոյ Թ-ԺԲ 1917
 Յովսէփի Սերաստացի Գ-ԺԲ 1918
 Գրիգորի Աղթամարցի Ա-ԺԲ 1919

Զամազան քերքերու մէջ .

- Հին Հայոց դրամներ «Տարազ» . . Ի, ԻԱ 1900
 Ռոստամ - Զաւ, Ժողովրդ. մէջ . Աղ-
 դադր. հանդէս Է, Ը. 1901
 Մանրանկարչութեան արուեստը Հա-
 յոց մէջ «Լուսմայ» Ա. 1902
 Դաւթի աւերակները «Հովիտ» . . . Ը 1910
 Մի նոր պատմագիր «Հովիտ» . . . ԼԸ. 1910
 Ս. Էջմիածնի տաճարի պատկերագրում-
 արութիւնը ևն. «Անահիտ» ԺԲ. 67-70 1911
 Համառոտ տեղեկութիւններ Էջմիածնի
 մի քանի մանրանկարների մասին .
 «Անահիտ» ԺԲ. 97-115 1911
 Խոսակերպ Ս. Նան (նմուշ ԺԳ դա-
 րու ոսկերչութեան) «Գեղարուեստ» ԻԹ. 1912
 Անիի ներկայ տարուայ պեղումներից .
 «Հովիտ» Թ. 1912
 Հայոց գրերի զլիւ. տեսակները «Տարազ» Ժ. 1912
 Քարտէջ հայ հնագրութեան «Շոդա-
 կաթ» (Ժողովածու) 1913
 Զապաղանից ժողովը «Շոդակաթ»
 (Ժողովածու) 1913
 Աղի Բէկեցի և նրանց շինարարական
 գործը «Բանբեր» 1921
 Նորից Գրիգորի Աղթամարցու մասին
 «Հանդէս Ամսօրեայ» 1930
 Մի ձեռագիր Սյրիկանցի «Սիոն» . . . 1931
 Սեւանի Առաքելի վանքի հարուստ-
 յին գույքը «Անահիտ» Ե-Զ. 1932
 Էջմիածնի մեծ խորանի տեսնողորդ
 վարպետը «Անահիտ» Գ-Զ 1935
 Սասանեան կերպարի կտոր Էջմիածնի
 Թ. 1759 ձեռագրի կազմի մէջ .
 «Հանդէս Ամսօրեայ» Ե-Զ. 1935
 Նորագիտ հայերէն մի կարեւոր ար-
 ձանագրութիւն Անրեղի մէջ «Սիոն» ԺԲ. 1936
 Մուշի Առաքելի վանքը «Զուարթնոց» . . 1937
 և «Տարոնի» տարեգիրք 1949
 Սամայ Ծոներ հաղարմեակը «Հա-
 յատանեայց Եկեղեցի» Ժ-ԺԱ. 1939
 Էջմիածնական շարաթ և նոր պատմ-
 ագրական նշանակութիւնը .
 «Հայաստ. Եկեղեցի» Զ. 1940
 Խիզանի դպրոցը «Նոր Գիր» 1944
 ԺԳ դարու քաղաքական և հոգեւո-
 բական վերածնութիւնը Արեւելեան
 Հայաստանում «Պայքար» բացառիկ . . 1944
 Մի կարեւոր ձեռագիր Նիւ Եօրքի
 հանր. մատենադարանում «Նոր Գիր» Ա. 1944
 Նոր աղբիւր Մի ձեռ. Այրիկանցու

- մասին «Էջմիածին» Ե. 1945
 Փիլիպոս Կաթողիկոսի արձուի դոր-
 դը «Հասկ» ԺԱ-ԺԲ. 1945
 Լուսաւորչի Խաչատր «Սեւան» պար-
 բերագիրք 1946
 Պատմական վայրերի հին անունների
 վերականգնում «Էջմիածին» . . . Զ-Է. 1946
 Թ. դարի ձեռագրական մի հատակո-
 տոր և Ատոմ Անձեւացեայ իշխան
 «Էջմիածին» Ը-Թ. 1946
 Մատենադարաններ հին Հայոց մէջ .
 «Պայքար» բացառիկ 1946
 Մի ձեռ. Այրիկանցու մահուան և
 ձառնորդի գրութեան ժամանակի
 մասին «Ակոս» ԺԸ. 1946
 Տարաւոր Թրեքեանի և Մինա Խա-
 թունի սերունդը «Հասկ հայագիտ.» Ա. 1947
 Ստեփանոս Թրեքեանի մահուան ժա-
 մանակի ճշգրտում «Պայքար» բացառիկ . 1947
 Թէոփոս գրիչ և նկարիչ «Կեանք
 և Գիր» տարեգիրք 1948
 Մի ձեռ. Անեցի գրիչ և նկարիչ
 «Հասկ հայագիտ. տարեգիրք» Ա. 1948
 Հեթում Ա. Նկարագրող Աւետարանի
 մնացորդները «Պայքար» բացառիկ . . 1949
 Ստեփանոս Վահագնի «Հասկ հայա-
 գիտ. տարեգիրք» Բ. 1949-50
 Էջմիածնի տաճարի նկարագրողումն
 ու ծաղկազարդումը ԺԷ-ԺԸ դարե-
 րում «Հասկ հայագիտ. տար.» Բ. 1949-1950
 Մանր արուեստի օրինակներ Երուսա-
 ղէմի վանքից «Պայքար» բացառիկ . . 1950
 Բարձրերդի Աւետարանի ոսկերչական
 կազմը. «Պայքար» բացառիկ 1951
 ԱՆՏԻՊ ԳՈՐԾԵՐԸ .
 «Յիշատակարանը Զեռագրաց» հատ. Գ, Դ, Ե. ևն.
 Հայ Գրչութեան Արուեստը հին Հայոց մէջ .
 Քարտէս հայ մանրանկարչութեան (120 դուստր
 և 3000-ի չափ սեւ մանրանկարներով).
 Նիւթեր և Ուսումնասիրութիւններ Հայ Արուես-
 տի և Մշակոյթի պատմութեան . Զ-Ը պրակներ .
 Գրիգոր Մաղիսարոսի թղթերը:
 Հայ վիճական արձանագրութիւնների ժողովածու .
 Հատակոտորք Որոգիէնէսի, Հիպոլիտեայ, Յով-
 հան Ոսկերեանի և այլոց Հարանց .
 Քարոզներ, և բանասիրական, զրական ու հրա-
 պարագրական յօդուածներ .
 Օրբեկեան իշխանութեան պատմութիւն (անա-
 տրա):